

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Ե Կ Ե Ղ Ե Յ Ա Կ Ա Ն Ք - Բ Ե Մ Ա Կ Ա Ն Ք

● Ուր. 20 Օգոստ. — Այսօր, Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Խորանին վրայ իր անդրաւոր խորհրդի Պատարագը մատուցեց Նորընծայ Հոգ. Տ. Շահան Արդ. Ս. Սահեան:

● Շր. 21 Օգոստ. — Այսօր, Մայր Տաճարի Աւագ Խորանին վրայ իր անդրաւոր Պատարագը մատուցեց Նորընծայ Հոգ. Տ. Վաղգէն Արդ. Գրգրեան:

● Կիր. 22 Օգոստ. — Ս. Պատարագը մատուցեցաւ Մայր Տաճարի Աւագ Խորանին վրայ, ժամարարն էր, ըստ սովորութեան, Նորընծայ Խորանի վարժիկն ու ուսուցիչը՝ Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արաճաճեան, որ խոսեցաւ անոնց խառնակութեան քարոզ մը: Ըստ սովորութեան, իրեն կը պատրաստէին երկու Նորընծայներ:

● Ուր. 27 Օգոստ. — Ս. Յակոբեանց Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածին մատրան մէջ պաշտօնաւոր վաղուան նախատեսակին նախագահեց Գեր. Տ. Նորայր Եպս. Պողոսեան:

● Շր. 28 Օգոստ. — Տօն Շողակաթի Ս. Էջմիածին: Ս. Պատարագը մատուցեցաւ Ս. Էջմիածին: Ժամարարն էր Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Զինչեան:

— Կէսօրէ ետք, ամբողջ Միաբանութիւնը, Գեր. Տեղապահ Ս. Հօր Գլխաւորութեամբ մեկնեցաւ Գեթեմանի ձորը ու «Հրաշափառ»ի հանդիսութեամբ մուտք գործեց Ս. Աստուածածնայ Տաճար, ուր պաշտօնեցան Կիրակոսեանը, Երեմիայան ժամերգութիւնն ու Վերափոխման մեծահանգէս նախատեսակը:

Իրկնադէմին, Գեր. Տ. Նորայր Եպս. ի նախագահութեամբ, կատարուեցան «Եկեացէ» և «Նկուս» և ապա առաւօտեան ժամերգութիւնը: Ուշ գիշերին, Միաբանութիւնն ու Ներկայ հասարակական զոհունակութեամբ վերադարձան Մայրավանք:

● Կիր. 29 Օգոստ. — Վերափոխման: Առաւօտեան, Գեր. Տեղապահ Ս. Հայրը ի գլուխ Միա-

բանութեան, ինքնաշարժերով մեկնեցաւ Գեթեմանի Ս. Աստուածածնայ Տաճար, ու կարեւորագոյն մը ետք՝ Հրաշափառ»ի հանդիսաւորութեամբ գործեց Տաճարէն Ներս. ուր մատուցեցաւ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ: Ժամարարն էր Գեր. Տ. Նորայր Եպս. Պողոսեան: Պատարագի ընթացքին քարոզեց Վերափոխման ժամերգութիւնը և յամենայն վտանգից մերօրեայ բնականութիւնէն թէ՛ ամէնքս ալ ենթակայ ենք փորձութեան, որմէ ազատելու համար մեր ուժերը անբաւական են, ուստի կը կարօտինք զերգանց ոյժի մը օգնութեան: Եւ այդ օժանդակութիւնը պիտի ստանանք Տիրոջմէ, բարեխօսութեամբ Սրբոյ և մանաւանդ Ս. Կոյսին: Ս. Կոյսը եղաւ օրինակի վրայ մը, արի ու հաւատաւոր, ոչ միայն երբ իր Միածին Որդին հրաշագործութիւններով կը փառաբանէր ամենուրեք, այլ և երբ ինքն իր յամենաւանք ամենածանր անարգանքներու կ'ենթարկուէր: Ս. Պատարագէն ետք, Գեր. ժամարար Սրբազանը նախագահեց «Անդառան»-ին, Արարողութեանց աւարտին, Միաբանութիւնն ու ժողովուրդի հոծ բազմութիւնը վերադարձան Մայրավանք:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուեցան «Անդառան», Երեմիայան ժամերգութիւնն ու նախատեսակը: Արարողութեանց նախագահեց Գեր. Տ. Նորայր Սրբազան:

● Բշ. 30 Օգոստ. — Տիեզերաց մեծեղ: Սուրբ Պատարագը մատուցեցաւ Ս. Գլխաւոր, ժամարարն էր Հոգ. Տ. Կիրակ Վրդ. Գարիկեան: Ս. Պատարագէն ետք, Գեր. Տ. Նորայր Սրբազանի նախագահութեամբ կատարուեցաւ օրուան յատուկ հոգեհանգստեան կարգը, թէ՛ Մայր Տաճարին մէջ և թէ՛ գաւթիք: Ս. Կիրակ Պատրիարքի շիրմին վրայ, Քիչ ետք, Նոյնը կրկնուեցաւ Հին Կրատան և Զամթաղի զերեզմանավայրերուն մէջ:

● Կիր. 5 Սեպտ. — Ս. Պատարագը մատուցեցաւ Ս. Զարութեան վերնատան Երախաւոր Ս. Աստուածածին մատրան մէջ. ժամարարն էր, ըստ սովորութեան, Տաճարին Տեսուչը՝ Հոգ. Տ. Հայկապետ Վրդ. Պայրամեան:

● Բշ. 6 Սեպտ. — Վաղուան նախատեսակին Ս. Յակոբ նախագահեց Գեր. Տ. Նորայր Եպս.:

● Դշ. 7 Սեպտ. — Ս. Յովակիմայ եւ Աննայի: Ս. Պատարագը մատուցեցաւ Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Ս. Յովակիմի զերեզմանին վրայ: Ըստ սովորութեան, ժամարարն էր Տաճարին Տեսուչը՝ Հոգ. Տ. Գեորգ Արդ. Նազարեան:

● Շր. 11 Սեպտ. — Կիրակոսեանը, ժամերգութիւնն ու վաղուան նախատեսակը պաշտօնեցան Ս. Յակոբ: Հանդիսաւորութեան էր Գեր. Տ. Ռուբէն Արքեպիսկոպոս:

● Կիր. 12 Սեպտ. — Գիւտ Գոսեղ Ս. Աստուածածին: Սուրբ Պատարագը մատուցեցաւ Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Ս. Կոյսի զերեզմանին վրայ, ժամարարն էր Հոգ. Տ. Շահան Արքեպիսկոպոս:

ԶԱԽԷՆ ՎՐԴ.

թեան պաշտպանը, թխորհրդանիշը ու ժին և ճշմարտութեանն:

Համակրելի և շնորհալի զրոյ մըն է Գրն. Նուպար Զարխուտեան: Հաճելի այս նորութեան քով հետաքրքրական պիտի ըլլար սպասել իր յաջորդ հատորին:

Սթանբուլ, Հանդիսաւոր երթի ու զարմին նախա-
գահեց Գեր. Տ. Ռուբէն Արքեպս. Մանասեան:

● Գեր. 19 Սեպտ. — Ս. Պատարագը մատու-
ցուեցաւ ի Ս. Յարութիւն, Բ. Գոյգոթայի մեր
վերամատարան մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ.
Պարգեհ Վրդ. Վրթանէսեան:

● Բշ. 20 Սեպտ. — Վաղուան նախատնակը
հանդիսաւորապէս պաշտուեցաւ ի Ս. Յակոբ: Կը
հանդիսապետէր Գեր. Տ. Ռուբէն Արքեպս.:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

● Գշ. 17 Օգոստ. — Առաւօտուն, Տեղապահ
Ս. Հայրը և Գեր. Տ. Սերոբէ Ե. Վրդ. Մանուկ-
եան մեկնեցան Խարայէլ և վերադարձան Ուր. 20
Օգոստոսի կէսօրէ վերջ:

● Եր. 21 Օգոստ. — Առաւօտուն, Գեր. Տ.
Ռուբէն Արքեպս. Մանասեան օղային գծով մեկ-
նեցաւ Անթիքի տա և վերադարձաւ Ուր. 10 Սեպ-
տեմբերի կէսօրէ վերջ:

● Գշ. 24 Օգոստ. — Կէսօրէ վերջ, Ժառնգ.
Վարժ. և Բնծայարանի Տեսուչ Հոգ. Տ. Հայկա-
զուն Վրդ. Արարատեան օղային գծով մեկնեցաւ
Պէյրուսի, զպրօցական յառաջիկայ տարելը շանին
համար նոր աշակերտներ արձանագրելու:

● Եր. 28 Օգոստ. — Առաւօտուն, Գեր. Տ.
Ռուբէն Արք. Քէմհանեան, որ երկու ամիսներէ
ի վեր հիւանդագին վիճակ մը ունէր և կը դար-
մանուէր Համբարձման լերան Օկոսթա Վիքթորիա
հիւանդանոցին մէջ, մեկնեցաւ Պէյրուսի, եւ-
թարկուելու համար վերաբուժական գործողու-
թեան:

● Եշ. 9 Սեպտ. — Կէսօրէ ետք, Տեղապահ
Ս. Հայրը վանական գործերով մեկնեցաւ Խարա-
յէլ և վերադարձաւ Գշ. 14 Սեպտ. ի կ. ա.:

● Եշ. 16 Սեպտ. — Կէսօրէ ետք, Հոգ. Տ.
Յակոբ Վրդ. Վարդանեան վանական գործերով
մեկնեցաւ Խարայէլ:

ԳԵՐ. Տ. ՍԵՐՈՎԵՆ Ե. ՎԵՐԳ. Ի

ԵՐՈՒՍԱՂԷՄ ԱՅՅԸ

Գշ. 14 Յուլիսին, Գեր. Տ. Սերոբէ Ե. Վրդ.
Մանուկեան օղային գծով ժամանեց Երուսաղէմ,
ամառուան երկու ամիսը անցնելու համար քա-
ղաքին մէջ:

Գեր. Հայրուրբը եկած էր Փարիզէն, ուր
կը մնար ցարդ իրրեւ Ամենայն Հայոց Կաթողիկո-
սական Պատուիրակ համայն Եւրոպայի թեմին և
Առաջնորդ Յրանաւայի:

Գեր. Հայրը մեկնեցաւ իր պաշտօնատեղին
Եշ. 2 Սեպտ. ի Կէսօրէ վերջ, Կաղզուրուած և
զոհ սրտով:

ՏՕԲԹ. ՇԱՒԱՐՇ ՆԱՐԳԻՈՒՆԻՒ

ԵՐՈՒՍԱՂԷՄ ԱՅՅԸ

Օգոստոս 19ին, հանգիստ ունեցանք վայելե-
լու ներկայութիւնը տաղանդաւոր գրագէտ-բա-
նաստեղծ Տօբթ. Շաւարշ Նարդունիի: Յարգելի
գրագէտը մօտ շաբաթ մը հիւրը եղաւ Ս. Աթա-
ռոյս Պատր. Տեղապահ Ամեն. Տ. Եղիշէ Արքեպս.
Տէրտէրեանին:

Օգոստոս 27ի դիշերը, Ժառնգ. Վարժարանի
արահին մէջ, մասնաւոր կարգադրութեամբ մը,
Միաբանութեան և զաղուծի մողութեան ներ-
կայութեան, խօսեցաւ մէկ ժամ տեղութեամբ,
փառարանելով հայ մշակոյթը և անոր ծնունդ
տուող ժողովուրդը, իր խօսքը տաք էր և յա-
ջառագրութիւնները հայեցի: Պատրաստուած էր
նոխ յայտագիր մը տեղւոյս Հ. Մ. Բ. Մ. Վար-
չութեան կողմէ:

Օգոստոս 28ի Շաբաթ օրը մեկնեցաւ զեպի
Պէյրուսի:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Շնորհակալութեամբ ստացանք մեր Ձե-
ռագրաց Յուցակի տպագրութեան ծախսը
հաւուոյն,

Հ. Բ. Բ. Միւրեքեկ	Տօլար 1000
Օր. Մարի Սելվինազեան	» 10
Օր. Ս. Է. Է	» 10
Տիար Վահէ Արքեան	Տիմար 10

Այս առիւի ի տեղեկութիւն կը ծանու-
ցանենք քե Յուցակի Գ. Հասորին 14րդ
պրակը մամուլի տակ ե այժմ:

Տեսուչ Ձեռագրաց Ս. Յակոբեանց
ՆՈՐԱՅՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ

تصدرها - بطريكية الارمن الارثوذكس مدير المطبعة - آباء زاوین ششانیان تقطیع فی مطبعة دير الارمن - القدس
أعداد ٩

سبتمبر ١٩٥٤

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
Editor - Father Zaven Chinchinian. Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

